ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-19/22

«ՀՀՌՑ» ՓԲԸ ԿԱՏԱՐԻԻ H=180Մ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՄԲ ՀԵՌՈՒՍՏԱԱՇՏԱՐԱԿԻ և ԱԼԻՔԱՏԱՐ ԿԱՄՐՋԱԿՆԵՐԻ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈԶԻՈՆ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՇԵՐՏԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ և ՆԵՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ք. Երևան «05» <u>օգոստոսի</u> 2019 թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրենի պաշտոնակատար Մ. Միլիտոնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Պրոթերմ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Է. Չատինյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված «ՀՀՌՑ» ՓԲԸ ԿԱՏԱՐԻԻ H=180Մ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՄԲ ՀԵՌՈՒՍՏԱԱՇՏԱՐԱԿԻ և ԱԼԻՔԱՏԱՐ ԿԱՄՐՋԱԿՆԵՐԻ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈԶԻՈՆ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՇԵՐՏԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ և ՆԵՐԿՄԱՆ աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Աշխատանքը կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան (Հավելված 1.1):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նշված ժամկետի խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, Պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պայմանները և նախատեսված ժամկետը,

գ) Կապալառուի կողմից խախտվել են Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին Պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ Պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու Պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և Պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքը կատարել Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում Պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել Աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրով նախանշված ժամկետը խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով Պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 /երեք/ տարի, կամ 1095 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.8 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 /տասնհինգ/ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված Աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե Պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված Աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված Աշխատանքը համարվում է ընդունված և Պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ դրա մի մասի արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ Աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է Պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ Աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված Աշխատանքներն ընդունելու համար.

2) Պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված Աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված Աշխատանքների) համապատասխանությունը Պայմանագրի պահանջներին և, եթե կատարված Աշխատանքը՝

ա. համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում Աշխատանքի ընդհանուր գումարի հինգ տոկոսը:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 15 400 000 (տասնհինգ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ դրա մի մասի համար, Պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում, Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝

ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է

ՆԳ-ն Աշխատանքի նախահաշվային գինն է /Հավելված 1.1/

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված Աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն նախահաշվով սահմանված Աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով Պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Աշխատանքի արդյունքը Պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց Պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների Աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են

դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե Աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման

ամսաթիվը: Կապալառուն, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Պայմանագրի N 1, N1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ, ք. Երևան, Նորք-Հովսեփյան 95	ՀՀ ,ք. Երևան, Նուբարաշեն 15փ., 11/3
«Ամերիաբանկ» ՓԲԸ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
h/h 1570027609970100	h/h 1930059227890100
ՀՎՀՀ 01501898	ՀՎՀՀ 02253748
----------	----------
ստորագրություն	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
«05» օգոստոսի 2019 թ. կնքված
ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-19/22 ծածկագրով Պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«ՀՀՌՑ» ՓԲ ընկերության Կատարիի H=180մ բարձրությամբ հեռուստաաշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման աշխատանքների կատարման

ՀՀ դրամ

Աշխատանքի							
						կատարման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգ-ման (CPV)	Տեխնի-կական բնութա-գիրը	չափման միավորը	ընդհանուր գինը	ընդհա-նուր քանա-կը	հասցեն	ժամկետը
1	45441160/1	բերված է ստորև	դրամ	15 400 000	1	ՀՀ Սյունիքի մարզ, Գորիսի տարածաշրջան, Կատարիի հեռուստակայան	Պայմանագրի հաստատման օրվանից 45 օրացուցային օր

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Հիմքը — «ՀՀՌՑ» ՓԲԸ 2019թ. Գործարար ծրագիրը, «ՀՀՌՑ» ՓԲԸ արհեստանոց և անտենա-կայմային խմբի կատարած հետազոտության արդյունքները

1.2 Ֆինանսավորման աղբյուրը — «ՀՀՌՑ» ՓԲԸ միջոցներ

2. Տեխնիկական բնութագիրը

2.1 Կատարել «ՀՀՌՑ» ՓԲԸ Կատարիի H=180մ բարձրությամբ հեռուստաաշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման աշխատանքներ /այսուհետ՝ Աշխատանք/ համաձայն Հավելված 1.1-ում նշված ծավալների:

2.2 Աշխատանքների իրականացման ընթացքում բացառել գործող անտենա-ալիքատարային համակարգերի ներկոտվելը:

2.3 Աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ նյութերը, այդ թվում.

- նախաներկ՝ ԳՓ-021, ըստ ГОСТ 25129-82, կամ համարժեքը;
- ներկ՝ ՊՓ 115, ըստ ГОСТ 6465-76, կամ համարժեքը՝ կարմիր և սպիտակ: Ներկի երանգը նախապես անհրաժեշտ է համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Ներկը պետք է լինի միևնույն խմբաքանակի արտադրության: Ներկի արտադրման և պահպանման ժամկետը, ինչպես նաև տեղափոխման պայմանները պետք է համապատասխանեն ГОСТ 6465-76 պահանջներին: Նախաներկի և ներկի համար Պատվիրատուին պետք է ներկայացվեն ГОСТ-երին վերջիններիս համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը /սերտիֆիկատ/: Բացի այդ, Պատվիրատուի պահանջով նախաներկը և ներկը կարող են ենթարկվել լրացուցիչ լաբորատոր հետազոտությունների;
- ուայթ սպիրիտ (լուծիչ):

Աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ այլ նյութեր, տեխնիկական միջոցներ, գործիքներ և պարագաներ, ձեռք են բերվում կամ ապահովվում են Կապալառուի կողմից

2.4 Ներկման Աշխատանքները կատարել համաձայն СНиП 2.03.11-85 "Защита строительных конструкций от коррозии" հետևյալ տեխնոլոգիական հերթականությամբ.

2.4.1 Ժանգի մաքրում մետաղական խոզանակներով, քերիչներով կամ մեխանիկական եղանակով: Ներկվող մակերևույթի մաքրության աստիճանը հասցնել 3-ի՝ ըստ ГОСТ 9.402-2004:

2.4.2 Ներկվող մակերևույթների փոշեզերծում:

2.4.3 Ներկվող մակերևույթների յուղայնազերծում ուայթ սպիրիտով:

2.4.4 Վնասված մակերեսների մածիկացում:

2.4.5 Նախաներկում ԳՓ-021 (ГОСТ 25129-82) մակնիշի նախաներկով, 1 շերտ, շերտի հաստությունը 20-25 մկմ:

2.4.6 Ներկում ՊՓ 115 (ГОСТ 6465-76) էմալով, 2 շերտ:

2.4.7 Ներկի շերտի ընդհանուր հաստությունը պետք է լինի ոչ պակաս 80 մկմ-ից:

2.4.8 Ներկի շերտը պետք է լինի համասեռ՝ առանց հոսահետքերի և փչուկների:

2.5. Ներկման Աշխատանքներն իրականացնել բարձր ճնշման ագրեգատների միջոցով: Ընդ որում, խտացված օդը պետք է զերծվի փոշուց և խոնավությունից:

2.6. Կոնստրուկցիաները ներկել իրար հաջորդող սպիտակ և կարմիր գույներով՝ըստ գոյություն ունեցող հերթականության:

2.7. Ներկման Աշխատանքները անհրաժեշտ է կատարել չոր մակերևույթների վրա, օդի ջերմաստիճանը 15^0 C-ից ոչ պակաս, հարաբերական խոնավությունը մինչև 80%, քամու արագությունը՝ մինչև 10 մ/վրկ պայմաններում:

2.8. Աշխատանքները կատարվելու են գործող ալեհավաքների և ալեցիրների հարևանությամբ, գերբարձր հաճախականային ճառագայթման ազդեցության պայմաններում, որից պաշտպանվելու համար անհրաժեշտ է օգտագործել հատուկ արտահագուստ և միջոցներ:

2.9. Գործող անտենաների անմիջական հարևանությամբ կատարվող Աշխատանքները , որոնց իրականացումը կպահանջի հեռարձակման տեխնիկական միջոցների անջատում, պետք է կատարվեն Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված ժամանակացույցով:

2.10. Աշխատանքներ իրականացնողները պետք է ունենան <<Բարձրության վրա վտանգավոր Աշխատանքների կատարում ալպինիստական տեխնոլոգիաներով և առաջին բուժ. օգնություն>> համապատասխան վկայական և առողջական վիճակի վերաբերյալ տեղեկանքի բնօրինակը, ինչը պետք է ներկայացվի որակավորման փուլում:

2.11. Աշխատանքներ կատարողները խստորեն պետք է պահպանեն բարձրության վրա Աշխատանքների իրականացման անվտանգության կանոնները: Կապալառուն ինքն է կրում պատասխանատվություն իր աշխատակիցների կողմից անվտանգության և հակահրդեհային կանոնների պահպանման, ինչպես նաև, բարձրության վրա Աշխատանքների իրականացման համապատասխան անվտանգության պարագաների անսարքությունների և վնասվածքների համար:

3. Աշխատանքների ընդունման կարգը

3.1. Կատարված Աշխատանքների ընդունումը համաձայն՝տեխնիկական վերահսկողության եզրակացության, СНиП III-4-80 ч. III "Правила производства и приемки работ" և СНиП 3.04.03-85* "Защита строительных конструкций и сооружений от коррозии":

3.2 Աշխատանքների արդյունքները ձևակերպվում են հանձնման-ընդունման ակտով:

4. Երաշխիք

4.1. Ներկի շերտի պահպանման երաշխիքային ժամկետ է սահմանվում 3 (երեք) տարի՝ Աշխատանքի հանձնման-ընդունման պահից:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշի 95	ՀՀ ,ք. Երևան, Նուբարաշեն 15փ., 11/3
«Ամերիաբանկ» ՓԲԸ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
h/h 1570027609970100	h/h 1930059227890100
ՀՎՀՀ 01501898	ՀՎՀՀ 02253748
----------	----------
ստորագրություն	/ստորագրություն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1.1
«05» 08 2019 թ. կնքված
ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-19/22 ծածկագրով Պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀՌՑ ՓԲ ընկերության Կատարի կայանի H=180մ բարձրության հեռուստաաշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման աշխատանքների կատարման

Նախահաշիվ N1

Շինարարական Աշխատանքներ արժեքը 33667,402 հազ.դր.

Ինդեքսավորումը\ աշխատավարձի K1= 1728,61

մեք. և սարք.շահագործում K2= 2765,48

Նյութերի 1.02*1.05* 1,129

NN	Հիմնավորումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ.դր./	Այն թվում՝									Ընդհանուր արժեքը	Նյութերի արժեքը	Նյութերի արժեքը
						Աշխատավարձը		Մեքենա-մեխ. շահագործումը		Նյութերի ծախսը և արժեքը 1 միավորի համար							
						ըստ նորմերի	գործող գներով	ըստ նորմերի	գործող գներով	անվա-նումը	չափման միավորը	քանակը	արժեքը	ընդհանուր արժեքը	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
1	13-263	Մետաղական կոնստրուկցիաների մաքրում ժանգից մետաղական խոզանակով	ք.մ	5998,0	0,277	0,160	0,277	0,00	0,00	□	□	0,00	0,00	0,00	1658,912	0,00	0,00
2	13-265	Մետաղական կոնստրուկցիաների փոշեզերծում	ք.մ	5998,0	0,131	0,060	0,104	0,01	0,028	□	□	0,00	0,00	0,00	787,966	0,00	0,00
3	13-270	Մաքրած մակերեսի յուղազերծում	100ք.մ	59,98	41,243	2,40	4,149	3,400	9,403	լուծիչ	կգ	33,0	0,694	22,902	2473,782	22,902	27,692
4	13-126	Վնասված մակերևույթների մածիկացում	100ք.մ	0,12	24,143	1,630	2,818	0,300	0,830	մածիկ ЭП-0010	կգ	11,3	1,5	16,950	2,897	16,950	20,495
5	13 - 121	Մետաղական կոնստրուկցիաների նախաներկում	100ք.մ	59,98	13,076	2,050	3,544	0,200	0,553	նախաներկ ГФ-021	կգ	8,6	0,694	5,968	784,325	7,426	8,980
										լուծիչ	կգ	1,5	0,972	1,458			

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
6	34-191 K=0.66	Պրոֆիլային մետաղական կոնստրուկցիաների ներկում (2 շերտ էմալ)	տն	154,00	54,222	12,606	21,791	6,798	18,800	էմալ ՊՓ-115	կգ	9,34	1,207	11,273	8350,173	11,273	13,63
7	34-190 K=0.66	Խողովակային մետաղական կոնստրուկցիաների ներկում (2 շերտ էմալ)	տն	236,00	35,820	8,976	15,516	4,851	13,415	էմալ ՊՓ-115	կգ	4,72	1,207	5,697	8453,514	5,697	6,889
		Ընդամենը՝													22511,569		
		Վերադիր ծախսեր 13.3%													2994,039		
		Ընդամենը /հազ.դր./													25505,608		
		Շահույթ 10%													2550,561		
		Ընդամենը /հազ.դր./													28056,169		
		ԱԱՀ 20%													5611,234		
		Ընդհանուրը՝ /հազ.դր./													33 667,402		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

/ստորագրություն

ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ ,ք. Երևան, Նուբարաշեն 15փ., 11/3
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
հ/հ 1930059227890100
ՀՎՀՀ 02253748

/ստորագրություն

Կ.Տ

Հավելված թիվ 2
«05» 08 2019 թ. կնքված
ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-19/22 ծածկագրով Պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45441160/1	**ՀՀՌՑ ՓԲ ընկերության Կատարի կայանի H=180մ բարձրության հեռուստաաշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման Աշխատանքների**	-	-	-	-	-	-	-	-	15 400 000	15 400 000	15 400 000	15 400 000	**15 400 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ ,ք. Երևան, Նուբարաշեն 15փ., 11/3
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
հ/հ 1930059227890100
ՀՎՀՀ 02253748

/ստորագրություն/
Կ.Տ